

## Հայտարարություն

«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությունը ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամՄՏեդ) ծրագրի շրջանակներում հայտարարում է «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ի ընդունելության մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել 18-ից 35 տարեկան այն երիտասարդները, որոնք՝

- բնակվում (հաշվառված) են ՀՀ մարզերից մեկում (առանց բացառության),
- երազում են դառնալ երիտասարդ առաջնորդներ,
- ցանկանում են ակտիվ դերակատարում ունենալ իրենց համայնքի հանրային կյանքում,
- պատրաստակամ են մասնակցել զարգացման և բարեփոխումների գործընթացներին,
- նպատակադրված են ապագայում մաս կազմել համայնքային իշխանությանը:

Մրցույթում ընտրված երիտասարդները հնարավորություն կստանան մասնակցելու «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ի (ՏԺԴ-ի) մեկնարկային եռօրյա դասընթացին (ապրիլի 19-21, Աղվերան), որի ընթացքում կներկայացվեն ՏԺԴ-ի գործունեության ձևաչափը, նպատակներն ու գործառույթները, ինչպես նաև կծավալվեն հետաքրքիր թեմատիկ քննարկումներ՝ նվիրված տեղական ինքնակառավարման և ժողովրդավարության հարցերին:

ՏԺԴ-ն երիտասարդներին հնարավորություն կընձեռնի նաև.

- մասնակցել մարզերում իրականացվելիք հետագա խորացված դասընթացներին,
- մասնակցել մարզերում ՏԺԴ-ի հետագա գործունեության կազմակերպմանը,
- անցնել աշխատանքային պրակտիկա համայնքապետարաններում, համայնքային կազմակերպություններում, մարզպետարաններում, նախարարություններում, ՀԿ-ներում և այլ կազմակերպություններում:

Մրցույթին մասնակցության հայտը կարող եք լրացնել հետևյալ հղումով՝

<https://goo.gl/forms/1IsFXDCIZkqgfWq03> :

Հայտերի ընդունման վերջնաժամկետը **ապրիլի 10-ն է:**

Մրցույթում ընտրված բոլոր մասնակիցների՝ ՏԺԴ-ի գործունեության հետ կապված ճանապարհաձախսը, սնունդը և գիշերակացը կփոխհատուցվեն կազմակերպիչների կողմից:

Հարցերի և լրացուցիչ այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 011 531397, 531398 հեռախոսահամարներով, գրել [local.dem.school@gmail.com](mailto:local.dem.school@gmail.com) էլեկտրոնային հասցեով կամ ՏԺԴ-ի պաշտոնական ֆեյսբուքյան էջին: